ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊՐՆ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան,

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերությունը՝ առարկությամբ Ազգային ժողով եմ վերադարձնում Ազգային ժողովի կողմից 2013 թվականի դեկտեմբերի 12-ին ընդունված «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները:

Հաշվի առնելով վերոհիշյալ օրենքներն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի անդամի պաշտոն զբաղեցրած անձի՝ օրենքով նախատեսված սոցիալական երաշխիքների, մասնավորապես՝ օրենքով սահմանված հիմքերով լիազորությունները դադարեցվելու դեպքում նրան նշանակվող կենսաթոշակի չափի պահպանման անհրաժեշտությունը՝ առաջարկում եմ օրենքներն ընդունել կից ներկայացվող առաջարկություններով:

Առդիր՝ 13 էջ:

Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

2013թ. դեկտեմբերի 28
ՀՆ- 2277